



Grant Thornton

An instinct for growth™

[Համախմբված] Ֆինանսական  
հաշվետվություններ և  
Անկախ ատոդիտորի եզրակացություն

[Ընկերության անվանումը] [Իրավական  
կարգավիճակը]

2011թ. դեկտեմբերի 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ

## Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին [համախմբված] հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին [համախմբված] հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին [համախմբված] հաշվետվություն	7
[Համախմբված ֆ] [Ֆ]ինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



Grant Thornton

An instinct for growth™

## Անկախ ատոլիտորի եզրակացություն

Գրասրճար Թորնթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC  
8/1 Vagharshyan str.  
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964  
F + 374 10 260 961

[www.grantthornton.am](http://www.grantthornton.am)

[Ընկերության անվանումը] [Իրավաբանական կարգավիճակը]-ի բաժնետերերին

Մեր կողմից իրականացվել է [Ընկերության անվանումը] [Իրավաբանական կարգավիճակը] [և իր դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ)] կից [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների ատոլիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին [համախմբված] հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին [համախմբված] հաշվետվությունները, ինչպես նաև [համախմբված] ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների համար*

[Խմբի/Ընկերության] ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել [համախմբված] ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Ատոլիտորի պատասխանատվություն*

Մենք պատասխանատու ենք ատոլիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված ատոլիտի հիման վրա նշված [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է ատոլիտը պլանավորել և անցկացնել՝ [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են [համախմբված] ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով [համախմբված] ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և դեկլարացիայի կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*[Կարծիքի ձևափոխման հիմքեր]*

*[Ձևափոխված] Կարծիք*

Մեր կարծիքով [համախմբված] ֆինանսական հաշվետվությունները տալիս են [Ընկերության անվանումը] [Իրավաբանական կարգավիճակը]-ի [և դուստր ընկերությունների]՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների *[ավելացնել ձևափոխման հետևանքով անհրաժեշտ փոփոխությունները]* :

*Հանգամանքների լուսաբանում*

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն [համար]-ի վրա, որը վերաբերում է *[մեկնաբանել հանգամանքը]* անորոշությանը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

*Այլ հանգամանքներ*

[հաշվետվության ամսաթիվ]

Գագիկ Գյուլբուդադյան

Տնօրեն

[աուդիտորի անունը]

Առաջադրանքի դեկլար

## Ֆինանսական վիճակի մասին [համախմբված] հաշվետվություն

Հազար դրամ		2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	5		
Ներդրումային գույք	6		
Ոչ նյութական ակտիվներ	7		
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	8		
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	9		
Հետաձգված հարկային ակտիվներ	10		
Այլ ֆինանսական ակտիվներ	11		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	12		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13		
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	9		
Այլ ֆինանսական ակտիվներ			
Ընթացիկ հարկային ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	14		
Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ	15		
Ընդամենը ակտիվներ			

## Ֆինանսական վիճակի մասին [համախմբված] հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ.	2010թ.
		դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>	16		
Բաժնետիրական (Կանոնադրական) կապիտալ			
Պահուստային կապիտալ			
Վերազնահատման պահուստ			
Արտարժույթի փոխարկման պահուստ			
Կուտակված շահույթ/(վնաս)			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	17		
Հետաձգված հարկային պարտավորություններ	10		
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	18		
Այլ պարտավորությունների և ծախսումների գծով պահուստներ	19		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ			
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20		
Վարկեր և փոխառություններ	17		
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	18		
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն			
Այլ պարտավորությունների և ծախսումների գծով պահուստներ	19		
Այլ ընթացիկ պարտավորություններ			
Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվների գծով պարտավորություններ	15		
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ			

[Համախմբված] Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են (ամսաթիվ)

[անուն]

Գործադիր տնօրեն

[անուն]

Ֆինանսական տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին [համախմբված] հաշվետվությունը պետք է ընթերցվի այս [համախմբված] Ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող [էջ]-ից մինչև [էջ]-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվություն

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	
	Ծանոթ.			
Հասույթ	21			
Վաճառքի ինքնարժեք	22			
Համախառն շահույթ/(վնաս)				
Այլ եկամուտ				
Իրացման ծախսեր				
Վարչական ծախսեր				
Այլ ծախսեր				
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)				
Ֆինանսական եկամուտ	23			
Ֆինանսական ծախսեր	23			
Այլ ֆինանսական արդյունքներ	24			
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը				
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	25			
Տարվա շահույթ/(վնաս)				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ				
Արտերկրյա ստորաբաժանումների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերություններ				
Հիմնական միջոցի վերագնահատում				
Վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն				
Շահութահարկի գծով ծախս այլ համապարփակ արդյունքներից				
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո				
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ				

[Շահույթի բաշխումը և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը բացահայտելու համար պետք է  
 ավելացվեն լրացուցիչ հոդվածներ:]

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունը պետք է ընթերցվի այս  
 [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող [Էջ]-ից մինչև [Էջ]-րդ  
 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին [համախմբված] հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական (Կանոնա- դրական) կապիտալ	Պահուս- տային կապիտալ	Վերագնա- հատման պահուստ	Այլ պահուստ- ներ	Կուտակված շահույթ/ (վնաս)	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ						
Տարվա շահույթ/(վնաս)						
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Թողարկված բաժնետի- րական կապիտալ						
Շահաբաժիններ Գործարքներ սեփականատերերի հետ						
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Տարվա շահույթ/(վնաս)						
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ						
Թողարկված բաժնետի- րական կապիտալ						
Տարվա շահույթ/(վնաս)						
Շահաբաժիններ Գործարքներ սեփականատերերի հետ						
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						

[Համախմբված հաշվետվությունների պատրաստման դեպքում փոխել ներկայացման ձևը]

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին [համախմբված] հաշվետվությունը պետք է ընթերցվի այս [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող [Էջ]-ից մինչև [Էջ]-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



## Դրամական միջոցների հոսքերի մասին [համախմբված] հաշվետվություն

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)		
Ծշգրտումներ`		
Մաշվածություն և անորտիզացիա		
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս		
Ներդրումային եկամուտ		
Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկում		
Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկում		
Տոկոսային ծախս		
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)		
Ֆինանսական եկամուտ		
Արժեզրկումից կորուստի հակադարձում		
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ		
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս		
Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		
Պաշարների փոփոխություն		
Այլ ակտիվների փոփոխություն		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		
Պահուստների փոփոխություն		
Այլ պարտավորությունների փոփոխություն		
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ		
Վճարված տոկոսներ		
Վճարված շահութահարկ		
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ		

## Դրամական միջոցների հոսքերի մասին [համախմբված] հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրված կանխավճարներ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		
Դուրսորդված ընկերությունների ձեռքբերում		
Ստացված տոկոսային եկամուտ		
<i>Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր		
Վարկերի և փոխառությունների մարում		
Վճարված շահաբաժիններ		
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>		
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)		
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում		

Դրամական միջոցների հոսքերի մասին [համախմբված] հաշվետվությունը պետք է ընթերցվի այս [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող [էջ]-ից մինչև [էջ]-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# [Համախմբված ֆ] [Ֆ]ինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն [Ընկերության անունը] ([Խումբ/Ընկերություն]) .....

[Հիմնական գործունեությունը]

[Գրանցման վայրը]

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

[Համախմբված] Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: [Նախկինում [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության Հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ) համաձայն: ՀՀՀՀՍ-ից անցումը ՖՀՄՍ-ին ներկայացված է Ծանոթագրություն [համար]-ում:]

[Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:]

### 2.2 Ծանաչման հիմքեր

[Համախմբված ֆ][Ֆ]ինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով [կամ իրական արժեքով] [վիճակը՝ ըստ անհրաժեշտության] և [որոշ] հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է [Խմբի/Ընկերության] գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և [Խմբի/Ընկերության] գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն [համախմբված] ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով [կամ ԱՄՆ դոլար] (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության հանդգնմամբ, այս արժույթն առավել օգտակար է [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով [կամ ԱՄՆ դոլար] ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի [Խմբի/Ընկերության] ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են [համախմբված] ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն [թիվ]-ում:

### 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում [այս բաժինը պետք է համապատասխանեցվի յուրաքանչյուր հաճախորդի ֆինանսական հաշվետվությունների հետ]

Ընթացիկ տարում [Խումբն/Ընկերությունն] ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2011թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Սեկնաբանման կոմիտեի (ՍԿ) կողմից:

**Ստանդարտներ, որոնք ազդում են ներկայացման և բացահայտման վրա** [բացահայտել միայն այն ստանդարտները, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա և բացատրել ազդեցությունը ավելի մանրամասնորեն]

ՀՀՄՍ 24. «Կապակցված կողմերի բացահայտումներ» (վերանայված 2009թ.)

ՀՀՄՍ 24-ի՝ «Կապակցված կողմերի բացահայտումներ» (վերանայված 2009թ.), համաձայն՝ կապակցված կողմի սահմանմանը ավելացվել է հետևյալ ձևափոխումը. «կառավարությանը կապակցված ընկերություն է այն ընկերությունը, որը վերահսկվում է, համատեղ վերահսկվում է կամ էական ազդեցության է ենթարկվում կառավարության կողմից»:

ՀՀՍՍ 24-ը՝ «Կապակցված կողմերի բացահայտումներ», սահմանում է, որ կառավարությանը կապակցված ընկերությունների դեպքում հաշվետու ընկերությունը ազատվում է կապակցված կողմերի հետ գործարքների և մնացորդների, ներառյալ՝ կառավարության հանդեպ պարտավորվածությունների բացահայտման պահանջներից, որը վերահսկում է, համատեղ վերահսկում է կամ էական ազդեցություն ունի հաշվետու ընկերության վրա, ինչպես նաև այլ ընկերության հանդեպ, որը հանդիսանում է կապակցված կողմ, քանի որ նույն կառավարությունը վերահսկում է, համատեղ վերահսկում է կամ էական ազդեցության ունի ինչպես հաշվետու ընկերության, այնպես էլ այդ մյուս ընկերության վրա:

Եթե [Խումբը/Ընկերությունը] կիրառում է սույն բացառությունը, այն պետք է բացահայտի գործարքների և համապատասխան մնացորդների վերաբերյալ հետևյալը.

- (ա) կառավարության անվանումը և [Խմբի/Ընկերության] հետ դրա կապակցվածության բնույթը (այն է՝ վերահսկողություն, համատեղ վերահսկողություն կամ էական ազդեցություն)
- (բ) ստորև նշված տեղեկատվությունը բավարար մանրամասնությամբ, որպեսզի [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվությունների ընթերցողներին հասկանալի լինի [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվությունների վրա կապակցված կողմերի հետ գործարքների ազդեցությունը.
  - (i) յուրաքանչյուր անհատապես էական գործարքի բնույթը և գումարը, և
  - (ii) այլ գործարքների բնույթը և գումարը, որոնք գումարային, բայց ոչ անհատապես, էական են՝ դրանց որակական և քանակական բացահայտումը

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել [Խմբի/Ընկերության] կողմից**

Այս [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՍՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել [Խմբի/Ընկերության] կողմից:

Դեկլարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն [Խմբի/Ընկերության] հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: [Խմբի/Ընկերության] [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

### ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ»

2009թ. նոյեմբերին թողարկված և 2010թ. հոկտեմբերին փոփոխված այս ստանդարտը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապահովման նոր պահանջներ է ներկայացնում: ՖՀՄՍ 9 պահանջում է, որ ՀՀՄՍ 39-ի՝ «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը», համաձայն ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են այնպիսի բիզնես մոդելում, որի նպատակն է պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր հավաքագրելը, և որում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը համարվում են միմյայն մայր գումարի և մայր գումարի մնացորդի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ, հիմնականում հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ չափվում են ամորտիզացված արժեքով: Բոլոր այլ պարտքային և բաժնային գործիքները հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում են իրենց իրական արժեքով:

ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա առավելապես վերաբերում է ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունների հաշվառմանը (որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով)՝ կապված այդ պարտավորության վարկային ռիսկի հետ: Մասնավորապես, համաձայն ՖՀՄՍ 9-ի, ֆինանսական պարտավորությունների համար, որոնք հաշվառվում են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրվում է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, քանի դեռ պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում չի առաջացնում եկամտի կամ ծախսի հաշվառման անհամատեղում: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում եկամտի կամ ծախսի: Նախկինում, համաձայն ՀՀՄՍ 39-ի, ֆինանսական պարտավորության՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, փոփոխության ամբողջ գումարը ճանաչվում էր եկամտում կամ ծախսում:

ՖՀՄՍ 9-ը կիրառելի է 2015թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Դեկլարությունը կանխատեսում է, որ ՖՀՄՍ 9-ը կկիրառվի [Խմբի/Ընկերության] [համախմբված] ֆինանսական հաշվետվություններում 2015թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և որ այս նոր ստանդարտի կիրառումն էական ազդեցություն չի ունենա [Խմբի/Ընկերության] [համախմբված] ֆինանսական ակտիվներին և ֆինանսական պարտավորություններին վերաբերող հաշվետվության մեջ ներկայացվող գումարների վրա: [Այնուամենայնիվ, մինչ մանրակրկիտ վերլուծության ավարտն իրատեսական չէ կատարել այդ ազդեցության ողջամիտ գնահատում:]

**ՖՀՄՍ 13. «Իրական արժեքի չափում»**

ՖՀՄՍ 13-ը չի առանձնացնում, թե որ միավորները պետք է հաշվառվեն իրական արժեքով, սակայն հստակեցնում է իրական արժեքի սահմանումները և ապահովում է համապատասխան ուղեցույց և մանրամասն բացահայտումներ իրական արժեքի չափումների վերաբերյալ: ՖՀՄՍ 13-ը կիրառելի է 2013թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: [Խմբի/Ընկերության] ղեկավարությունը պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը:

**ՀՀՄՍ 1 (Փոփոխություն). «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»**

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններում պահանջվում է, որ ընկերությունը խմբավորի այլ համապարփակ եկամուտում արտացոլված միավորները այնպիսի խմբերում, որոնք համաձայն այլ ՖՀՄՍ-ների.

(ա) հետագայում չեն վերադասակարգվի շահույթ կամ վնաս, և

(բ) հետագայում, երբ բավարարվեն որոշակի պայմաններ, կվերադասակարգվեն շահույթ կամ վնաս.

Այս փոփոխությունը կիրառելի է 2012թ. հուլիսի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

[Խմբի/Ընկերության] ղեկավարությունն ակնկալում է, որ սա կփոխի այլ համապարփակ եկամուտում արտացոլվող միավորների ընթացիկ ներկայացումը, այնուամենայնիվ, դա ազդեցություն չի ունենա այդ միավորների չափման և ճանաչման վրա:

**ՖՀՄՄԿ 20 «Մակերեսային հանքարդյունահանման ժամանակ արտադրության փուլում մակերեսի մաքրման ծախսեր»**

ՖՀՄՄԿ 20-ը սահմանում է հանքանյութին հասնելու համար հանքարդյունահանող ընկերությունների կողմից կատարված մակերեսի մաքրման ծախսերի հաշվառման հարկադրողական ուղեցույց («մակերեսի մաքրման ծախսեր»);

Պարտադիր չէ, որ արտադրության փուլում մակերեսի մաքրման ժամանակ հեռացված նյութերի 100 տոկոսը թափոն լինի. հաճախ այդ նյութերը իրենցից ներկայացնում են հանքանյութի և թափոնների խառնուրդ: Հանքանյութ - թափոն հարաբերակցությունը կարող է տատանվել տնտեսապես ոչ շահավետ ցածր մակարդակից մինչև շահութաբեր բարձր մակարդակ: Ցածր հանքանյութ - թափոն հարաբերակցությամբ նյութերի հեռացումից կարող են ձևավորվել օգտագործման ենթակա նյութեր, որոնք կարող են օգտագործվել պաշարներ ստանալու նպատակով: Այս նյութերի հեռացումը կարող է մաս ապահովել ավելի խորը գտնվող նյութերին հասանելիություն, որոնք ունեն ավելի բարձր հանքանյութ - թափոն հարաբերակցություն: Այսպիսով՝ մակերեսի մաքրումից ընկերությունը կարող է քաղել կրկնակի օգուտ. օգտագործման համար պիտանելի հանքանյութի արդյունահանում, որը կարող է օգտագործվել պաշարների արտադրությունում և հետագա ժամանակաշրջաններում արդյունահանման ենթակա նյութի առավել մեծ քանակներին հասանելիության բարելավում:

ՀՍՄԿ 20-ը դիտարկում է, թե երբ և ինչպես պետք է առանձին հաշվառվեն մակերեսի մաքրումից ծագող նշված երկու օգուտները, ինչպես նաև այն, թե ինչպես պետք է չափվեն այս օգուտները սկզբնական ճանաչման և հետագա հաշվառման ժամանակ:

ՀՍՄԿ 20-ը կիրառելի է 2013թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը կիրառելի է մակերեսի մշակման այն ծախսերի նկատմամբ, որոնք տեղի են ունեցել ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

Ըստ ղեկավարության սպասումների՝ ՀՍՄԿ 20-ը կկիրառվի [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվություններում 2013թ. հունվարի 1-ից սկսվող տարեկան ժամանակաշրջանի համար, և նոր մեկնաբանության կիրառումը էական ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա: Այնուամենայնիվ, իրատեսական չէ այդ ազդեցության խելամիտ գնահատումը, քանի դեռ մանրամասն դիտարկում չի իրականացվել, և [Խումբը/Ընկերությունը] չի սկսել հանքավայրի շահագործումը:

## 2.6 Դուստր ընկերություններ

[Սույն ծանոթագրությունը կիրառելի է միայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար]:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

2011թ. դեկտեմբերի 31 Դուստր ընկերություն	Մասնա- բաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործու- նեության ուղղուտ	Ձեռք- բերման ամսաթիվ
2010թ. դեկտեմբերի 31 Դուստր ընկերություն	Մասնա- բաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործու- նեության ուղղուտ	Ձեռք- բերման ամսաթիվ

[Նկարագրել տարվա ընթացքում նոր ձեռքբերումները:]



## 2.7 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում: Այնուամենայնիվ, կատարված ուղղումն ազդեցություն չի ունեցել նախորդ տարիների ֆինանսական արդյունքների վրա (տես՝ ծանոթագրություն [համար]):

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Համախմբման հիմքերը

[Սույն քաղաքականությունը կիրառելի է միայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար]

#### Դուստր ընկերություններ

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռքբերված դուստր ընկերությունները հաշվառվում են գնման մեթոդով: Ձեռքբերման ժամանակ ձեռքբերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասի:

Ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գույվիլ: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ չվերահսկվող բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած՝ փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Չվերահսկվող բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները դուստր ընկերության սեփական կապիտալում չեն գերազանցում չվերահսկվող բաժնեմասը, եթե փոքրամասնության բաժնետերերը պարտավորված չեն իրենց վրա վերցնել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին:

### *Համախմբման արդյունքում չներառված գործարքներ*

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները: Ասոցիացված ընկերությունների հետ իրականացված գործարքներից առաջացած չիրացված օգուտները հաշվանցվում են նույն ասոցիացված ընկերությունում համապատասխան ներդրման նկատմամբ:

### *Ասոցիացված կազմակերպություններ*

Ասոցիացված կազմակերպությունն այն կազմակերպությունն է, որտեղ Խումբը նշանակալի ազդեցություն ունի և որը չի հանդիսանում ներդրողի ո՛չ դուստր, ո՛չ էլ համատեղ ձեռնարկում: Նշանակալի ազդեցություն է համարվում ներդրման առարկա հանդիսացող ընկերության ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունը, բայց ոչ այդ քաղաքականության վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

Ասոցիացված կազմակերպությունների գործունեության արդյունքները, ինչպես նաև ակտիվներն ու պարտավորությունները ներառված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հաշվապահական հաշվառման բաժնեմասնակցության մեթոդով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք հաշվառվում են՝ համաձայն ՖՀՄՍ 5. «Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործունեություն»: Համաձայն բաժնեմասնակցության մեթոդի՝ ասոցիացված ընկերություններում ներդրումները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում են ինքնարժեքով, իսկ հետագայում՝ ճշգրտվում ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում ընկերության բաժնեմասի փոփոխությունների չափով՝ նվազեցված առանձին ներդրումների արժեքից մինչև չափով: Խմբի մասնակցությունից դուրս ասոցիացված կազմակերպության կորուստները չեն ճանաչվում, եթե միայն Խումբն իրավական կամ կառուցողական պարտավորություններ չի կրել կամ ասոցիացված կազմակերպության անունից վճարումներ չի իրականացրել:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գույվիլ: Գույվիլը ներառված է ներդրման հաշվեկշռային արժեքում և արժեքից համար գնահատվում է որպես ներդրման մաս: Ձեռքբերման արժեքի ցանկացած գերազանցում ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասի նկատմամբ, վերագնահատումից հետո, ուղղակիորեն ճանաչվում է շահություն կամ վնասում:

Խմբի և ասոցիացված կազմակերպության միջև տեղի ունեցած գործարքներից առաջացած շահույթը և վնասը բացառվում են տվյալ ասոցիացված ընկերությունում Խմբի համապատասխան բաժնեմասի սահմաններում:

### **3.2 Ընդհանուր դրույթներ և ՖՀՄՍ-ի առաջին անգամ ընդունումը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2011թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ-ին անցման ազդեցությունը [Խմբի/Ընկերության] ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն [համար]-ում:

Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել [Խմբի/Ընկերության] կողմից, ներկայացված են ծանոթագրություն [համար]-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

### **3.3 Արտարժույթ**

#### *Արտարժույթով գործարքներ*

[Համախմբված] Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս [Խմբի/Ընկերության] համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 385.77 ՀՀ դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 363.44 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում (*փոխել/ջնջել ըստ անհրաժեշտության*):

*[Համախմբված] Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումն այլ արժույթով [այս հատվածը անհրաժեշտ է, երբ համախմբված ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվում են այլ արտարժույթով]*

[Խմբի/Ընկերության] ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից [այլ արժույթի]՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են [այլ արժույթի]՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կրեդիտագրվում է սեփական կապիտալին՝ արտարժույթի վերագնահատման պահուստում:

### **3.4 Հիմնական միջոցներ (փոխել՝ ըստ անհրաժեշտության)**

*Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները [*բացատրել դասերը, օրինակ՝ հողեր և շենքեր*], որոնք օգտագործվում են ապրանքների արտադրության կամ մատակարարման, ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է գուտ արժեքը [*փոխել՝ ըստ անհրաժեշտության*]: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ [*անկախ գնահատողների կողմից*] այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում [Խմբի/Ընկերության] կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ *[վոխել՝ ըստ անհրաժեշտության]*:  
Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին *[վոխել՝ ըստ անհրաժեշտության]*:

#### *Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները *[բացատրել դասերը, օրինակ՝ գույք և տնտեսական գործիքներ]* հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն [Խմբի/Ընկերության] հաշվապահական հաշվառման քաղաքականության:  
Վարձակալական գույք հանդիսացող շենքերը *[վոխել՝ ըստ անհրաժեշտության]* նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- [ ] տարի
Տրանսպորտային միջոցներ	- [ ] տարի
Տնտեսական գույք	- [ ] տարի
Այլ	- [ ] տարի

### 3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել [Խմբի/Ընկերության] կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է [թիվ] տարի [ոչ նյութական ակտիվների դասի համար]:

### 3.6 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով: *[փոխել՝ ըստ անհրաժեշտության]*

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

### 3.7 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՄՍ 17-ի՝ «Վարձակալություն», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով [Խմբին/Ընկերությանը] պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

### 3.8 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով [առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ)/միջին կշռված մեթոդը], և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ [Խումբը/Ընկերությունը] դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

### **Ֆինանսական ակտիվներ (փոխել՝ ըստ անհրաժեշտության)**

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: [Խմբի/Ընկերության] ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն [թիվ]-ում:

Ընդհանուր առմամբ, [Խմբի/Ընկերության] բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեքի վնաս գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

- i. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են [Խմբի/Ընկերության] կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ամսացյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:



ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեքների արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

iii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները [փոխել ըստ անհրաժեշտության]: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե [Խմբի/Ընկերության] ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները [փոխել ըստ անհրաժեշտության] հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, եթե առկա է ավանդների [փոխել ըստ անհրաժեշտության] արժեզրկման օբյեկտիվ ապացույց, ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով: Ավանդների [փոխել ըստ անհրաժեշտության] հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

iv. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

### *Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ [Խումբը/Ընկերությունը] սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

### *Մնացորդներ դրամարկղում և բանկերում*

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

### *Ֆինանսական պարտավորություններ*

[Խմբի/Ընկերության] ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: [Խմբի/Ընկերության] ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն [թիվ]-ում:

#### *i. Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

**3.10 Արժեզրկում**

*Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեգրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեգրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեգրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեգրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեգրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեգրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

### **3.11 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ**

Երբ [Խումբը/Ընկերությունը] մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին [համախմբված] հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

### **3.12 Սեփական կապիտալ**

[Խմբի/Ընկերության] կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### 3.13 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ [Խումբը/Ընկերությունը] կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը [Խմբի/Ընկերության] կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է [Խմբին/Ընկերությանն]՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

### 3.14 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ [Խումբը/Ընկերությունն] ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը սովորաբար, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

### 3.15 Շահութահարկ [ստուգել յուրաքանչյուր հոդվածի կիրառելիությունը և փոխել՝ անհրաժեշտության դեպքում]

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ [Խումբն] ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ [Խումբ/ Ընկերությունը] կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով [Խումբը/ Ընկերությունը] հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

[Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և [Խումբը/ Ընկերությունը] մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները: *[համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար]]*

**3.16 Սեզմենտային հաշվետվություններ (սա կիրառելի է այն կազմակերպությունների համար, որոնց պարտքային կամ կապիտալի գործիքները գնվում և վաճառվում են բաց շուկայում) [Այս ծանոթագրության օրինակը վերաբերում է էլեկտրոնային սարքավորումների վաճառքում ներգրավված ընկերությանը և պետք է փոփոխվի տվյալ ընկերության պահանջներին համապատասխան]**

Գործառնական սեզմենտները որոշելիս ղեկավարությունը հետևում է [Խմբի/Ընկերության] ծառայության տարբեր տեսակներին, որոնք ներկայացնում են [Խմբի/Ընկերության] կողմից տրամադրվող հիմնական ապրանքներն ու ծառայությունները:

*Կենցաղային ապրանքների բնագավառի* գործունեությունը ներառում է կենցաղային ապրանքների վաճառքն ու վաճառքից հետո մատուցվող ծառայությունները: *Ջեռուցման բնագավառը* ներառում է ջեռուցման ապրանքների վաճառքը, տեղադրումը և ջեռուցման ապրանքների վաճառքից հետո ծառայությունների մատուցումը:

Այս գործառնական սեգմենտներից յուրաքանչյուրի նկատմամբ մոտեցումը տարբեր է, քանի որ այս ծառայության տեսակներից յուրաքանչյուրը պահանջում է տարբեր տեխնոլոգիաների և այլ ռեսուրսների կիրառում, ինչպես նաև շուկայավարման տարբեր մոտեցումներ:

Համաձայն ՖՀՍՍ 8-ի՝ [Խմբի/Ընկերության] կողմից կիրառվող սեգմենտային հաշվետվությունների համար չափման քաղաքականությունը նույնն է, ինչ որ ֆինանսական հաշվետվությունների համար կիրառվող քաղաքականությունը, որը [հասույթ, ծախսեր, ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից եկամուտներ] [փոխել ըստ անհրաժեշտության] ներառված չէ գործառնական սեգմենտների գործառնական շահույթի գումարը որոշելիս: Ի լրումն՝ [Խումբ/ Ընկերության] այն ակտիվները, որոնք ուղղակիորեն չեն առնչվում ցանկացած գործառնական սեգմենտի բիզնես գործունեությանը, սեգմենտին չեն բաշխվում:

### **3.17 Հասույթի ճանաչում**

*[Այս քաղաքականությունը պետք է փոփոխվի յուրաքանչյուր առանձին դեպքի համար]*

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով [Խմբի/Ընկերության] կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

#### ***Ապրանքների վաճառք***

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.

- [Խումբը/Ընկերությունը] գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- [Խումբը/Ընկերությունը] չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ՝ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն [Խումբ/Ընկերություն],
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

### **Ծառայությունների մատուցում**

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն [Խումբ/Ընկերություն],
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

### **Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ**

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

### **Վարձակալական եկամուտ**

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

### **Կառուցման պայմանագրեր**

Պայմանագրից հասույթը ներառում է պայմանագրով համաձայնեցված նախնական գումարը՝ գումարած պայմանագրային աշխատանքներում փոփոխությունները, վնասապահանջները և խրախուսիչ վճարները՝ այնքանով, որքանով հավանական է, որ դրանք կհանգեցնեն հասույթի, և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Երբ կառուցման պայմանագրի արդյունքը հնարավոր լինի արժանահավատորեն չափել, այդ ժամանակ պայմանագրից հասույթը կճանաչվի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի գծով ծախսերը ճանաչվում են կատարմանը զուգընթաց, բացառությամբ այն դեպքի, երբ դրանք առաջացնում են ապագա պայմանագրային գործունեության գծով ակտիվ: Ավարտվածության աստիճանը որոշվում է՝ հիմնվելով փաստացի կատարված աշխատանքների վրա [բացատրել, եթե մոտեցումն այլ է]: Երբ կառուցման պայմանագրի գծով արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, ապա պայմանագրից հասույթը ճանաչվում է փաստացի ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն: Պայմանագրից ակնկալվող վնասն ուղղակիորեն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:



#### 4 Սեզմենտային հաշվետվություններ

[Խմբում/Ընկերությունում] ներկայումս, որպես գործառնական սեզմենտներ, գործում են ծառայության երկու տեսակներ, որոնք ավելի մանրամասն նկարագրված են ծանոթագրություն [թիվ]-ում: Այս գործառնական սեզմենտները վերահսկվում են և ռազմավարական որոշումներն ընդունվում են՝ հիմնվելով ճշգրտված սեզմենտային գործառնությունների արդյունքների վրա:

Հոդված	Կենցաղային ապրանքներ	Ջեռուցման համակարգ	Ընդամենը
2011թ.			
<i>Հասույթ</i>			
Արտաքին հաճախորդներից			
Այլ սեզմենտներից			
<i>Սեզմենտի հասույթ</i>			
Պաշարների շարժ			
Հունքի և նյութերի ինքնարժեք			
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր			
Ոչ ֆինանսական ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա			
Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում			
Այլ ծախսեր			
Սեզմենտի գործառնական շահույթ			
Սեզմենտի ակտիվներ			
Հոդված	Կենցաղային ապրանքներ	Ջեռուցման համակարգ	Ընդամենը
2010թ.			
<i>Հասույթ</i>			
Արտաքին հաճախորդներից			
Այլ սեզմենտներից			
<i>Սեզմենտի հասույթ</i>			
Պաշարների շարժ			
Հունքի և նյութերի ինքնարժեք			
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր			
Ոչ ֆինանսական ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա			
Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում			
Այլ ծախսեր			
Սեզմենտի գործառնական շահույթ			
Սեզմենտի ակտիվներ			

[Խմբի/Ընկերության] գործառնական սեզմենտների գումարները համադրվում են ֆինանսական հաշվետվությունների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ

2011թ.

2010թ.

**Սեզմենտի հասույթ**

\_\_\_\_\_  
=====

**Սեզմենտի շահույթ/(վնաս)**

\_\_\_\_\_  
=====

**Սեզմենտի ակտիվներ**

\_\_\_\_\_  
=====

ՀԱՄԱԳՐՈՒ

## 5 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հոդ, շենքեր և շինություն- ներ	Տրանսպոր- տային միջոցներ և տնտեսական գույք	Անավարտ շինարա- րություն	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք [կամ վերագնահատված արժեք]</i>					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ					
Ավելացում					
Օտարում					
Վերագնահատումից արժեքի աճ					
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն					
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Ավելացում					
Օտարում					
Վերագնահատումից արժեքի աճ					
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն					
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ					
Տարվա ծախս					
Օտարման հետևանքով դուրսգրում					
Արժեզրկումից կորուստ					
Վերագնահատման հետևանքով դուրսգրում					
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն					
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Տարվա ծախս					
Օտարման հետևանքով դուրսգրում					
Արժեզրկումից կորուստ					
Վերագնահատման հետևանքով դուրսգրում					
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն					
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով [Խումբը/Ընկերությունը] 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է [գումարը] հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [գումարը] հազար դրամ) հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ: [Հաշվետու ամսաթվի դրությամբ [Խումբը/Ընկերությունը] գրավադրված հիմնական միջոցներ չունի:]

[Խմբի/Ընկերության] [հոդերը և շենքերը] [վոխել՝ ըստ անհրաժեշտության] վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողների կողմից [ամսաթիվ] դրությամբ: Գնահատումը կատարվել է՝ հիմնվելով շուկայում վերջերս իրականացված գործարքների վրա՝ «պարզեցված ձեռքի հեռավորության» պայմանով [վոխել մեթոդը՝ ըստ անհրաժեշտության]: Վերագնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

Եթե [հոդերը և շենքերը] [վոխել՝ ըստ անհրաժեշտության] ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվերի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները համապատասխանաբար կկազմեին [նշել գումարները]:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է [նշել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության հոդվածները]:

Տարվա ընթացքում [Խումբն/Ընկերությունն] իրականացրել է իր [հիմնական միջոցների] վերանայում [վոխել՝ ըստ անհրաժեշտության]: Վերանայումը հանգեցրել է [գումար] արժեզրկման կորստի, որը ճանաչվել է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին [համախմբված] հաշվետվությունում: Վերոնշյալ ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվել է՝ հիմնվելով դրանց համապատասխան [շուկայական արժեքի] վրա [վոխել՝ ըստ անհրաժեշտության]:

[Լրացուցիչ բացահայտել վերագնահատումը, վաճառքի համար պահվող ակտիվները, մաշվածության ծախսի բաշխումը համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ըստ հոդվածների, զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցները, որոնք դեռևս հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, արժեզրկման կորստի բացատրությունը, ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը, հիմնական միջոցների իրական արժեքը, եթե կիրառվում է գնահատման հիմնական մոտեցում, և եթե իրական արժեքն էականորեն տարբերվում է հաշվեկշռային արժեքից և այլն]:

## 6 Ներդրումային գույք

Հազար դրամ	2011թ.	2010թ.
Իրական արժեք		
Տարեսկզբի մնացորդ		
Ավելացում		
Օտարում		
Իրական արժեքի ճշգրտումներից զուտ օգուտ/(վնաս)		
Փոխանցում հիմնական միջոցներին		
Այլ փոփոխություններ		
Տարեվերջի մնացորդ		

[Խմբի/Ընկերության] ներդրումային գույքի իրական արժեքը որոշվում է նմանատիպ գույքի շուկայում գործող գների հիման վրա: [Խմբի/Ընկերության] ողջ ներդրումային գույքը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու նպատակով:

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով [Խումբը/Ընկերությունը] 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է [գումարը] հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [գումարը] հազար դրամ) արժեք ունեցող ներդրումային գույք: [Հաշվետու ամսաթվի դրությամբ [Խումբը/Ընկերությունը] գրավադրված ներդրումային գույք չունի:]

[Ամբողջ գույքը տրված է գործառնական վարձակալության: Վարձակալական եկամուտը կազմում է [գումարը] հազար դրամ (2010թ.՝ [գումարը] հազար դրամ) և ներառված է այլ եկամուտում: [գումարը] հազար դրամ (2010թ.՝ [գումարը] հազար դրամ) ուղղակի գործառնական ծախսերը գրանցվել են որպես այլ ծախսեր, որոնցից [գումարը] հազար դրամ (2010թ.՝ [գումարը] հազար դրամ) կապված է ազատ գույքի հետ, որը չի ձևավորում վարձակալական եկամուտ:

Բոլոր վարձակալական պայմանագրերը չեղյալ չհայտարարվող են և կնքվել են [թիվ] տարի ժամկետով: Գործառնական վարձակալության գծով ստացվելիք վարձավճարները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի		
1 - 5 տարի		
Ավելի քան 5 տարի		

]

## 7 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համա- կարգչային ծրագրեր	Լիցեն- զիաներ և ապրան- քանիշեր	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2010թ. հունվարի 1-ի դրությամբ				
Ավելացում				
Օտարում				
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Ավելացում				
Օտարում				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
<i>Կուտակված ամորտիզացիա</i>				
2010թ. հունվարի 1-ի դրությամբ				
Տարվա ծախս				
Օտարման հետևանքով դուրսգրում				
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Տարվա ծախս				
Օտարման հետևանքով դուրսգրում				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				

Ամորտիզացիայի ծախսը բաշխվել է [նշել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության հոդվածները]:

## 8 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Հազար դրամ	2011թ.	2010թ.
Տարեսկզբի մնացորդ		
Ավելացում		
Շահույթի/(վնասի) բաժին		
Փոխարժեքային տարբերություններ		
Այլ շարժեր		
Տարեվերջի մնացորդ		

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ասոցիացված կազմակերպություններում ներդրումները ներառում են [գումար] հազար դրամ արժեքով գույքիլ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [գումար] հազար դրամ):

Հիմնական ասոցիացված կազմակերպությունների (ոչ մեկը ցուցակագրված չէ) արդյունքներում և ակտիվներում (ներառյալ գուղվիլը) [Խմբի/Ընկերության] բաժնեմասը ներկայացված է ստորև.

Անվանում	Հիմնական գործունեություն	Գրանցման երկիր	Բաժնեմասի չափ (%)	
			2011թ.	2010թ.

[Խմբի/Ընկերության] ասոցիացված կազմակերպությունների մասին ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը ակտիվներ		
Ընդամենը պարտավորություններ		
Զուտ ակտիվներ		
[Խմբի/Ընկերության] բաժնեմասը ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում		
Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընդամենը հասույթ		
Ընդամենը շահույթ/(վնաս)		
[Խմբի/Ընկերության] բաժնեմասը ասոցիացված կազմակերպության շահույթում		

**9 Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր**

[Խումբը/Ընկերությունը] [վարձակալված ակտիվի տեսակ]-ները հանձնել է ֆինանսական վարձակալության: Բոլոր վարձավճարները տրամադրվել են դրամով [կամ այլ արժույթով]: Ֆինանսական վարձակալության միջին տևողությունը կազմում է [թիվը] տարի:

Հազար դրամ	Նվազագույն վարձավճարներ	
	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ		
Ֆինանսական եկամուտ		
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ		
Ֆինանսական եկամուտ		
Հինգ տարվանից հետո		
Վարձավճարներ		
Ֆինանսական եկամուտ		
Զուտ ներկա արժեք		

Ֆինանսական վարձակալության հանձնված ակտիվների չերաշխավորված մնացորդային արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է [զումար] հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [զումար] հազար դրամ): Վարձակալության գծով տոկոսադրույքը ամրագրվել է պայմանագրի օրվա դրությամբ՝ վարձակալության ամբողջ ժամկետի համար: Միջին արդյունավետ տարեկան տոկոսադրույքը կազմում է մոտավորապես [զումար] տոկոս (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [զումար] տոկոս):



## 10 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ.	2010թ.
Տարեսկզբի մնացորդ		
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն [թիվ])		
(Պեքետագրված)/կրեդիտագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներին		
Արտարժույթի վերահաշվարկման տարբերություն		
Տարեվերջի մնացորդ		

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2011թ. հունվարի 1	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	2011թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ				
Ոչ նյութական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր				
Առևտրային կրեդիտորական պարտքեր				
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր				
Առևտրային կրեդիտորական պարտքեր				
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)				

2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված			Շահույթում կամ վնասում ճանաչված	2010թ. դեկտեմբերի 31
	2010թ. հունվարի 1				
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>					
Հիմնական միջոցներ					
Ոչ նյութական ակտիվներ					
Առևտրային դեբիտորական պարտքեր					
Առևտրային կրեդիտորական պարտքեր					
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>					
Առևտրային դեբիտորական պարտքեր					
Առևտրային կրեդիտորական պարտքեր					
Ջուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)					
Ներառյալ՝			2011թ.	2010թ.	
Փոխհատուցման/մարման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում					
Փոխհատուցման/մարման ենթակա 12 ամսվա ընթացքում					

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարները վերաբերում են [հողերի և շենքերի] վերագնահատմանը (*փոխել կամ ջնջել՝ ըստ անհրաժեշտության*):

[*Լրացուցիչ բացահայտել չօգտագործված հարկային վնասները և չճանաչված հետաձգված հարկային ակտիվները*]

## 11 Այլ ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար նատչելի ներդրումներ		
<i>Բաժնային գործիքներ՝ չցուցակագրված</i>		
Ընկերություն 1		
Ընկերություն 2		
Ընկերություն 3		

**Բաժնային ներդրումներ` չցուցակագրված**

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի ներդրումները չցուցակագրված կապիտալի արժեքից են: Այս ներդրումների գծով գործող շուկա առկա չէ և չեն իրականացվել այնպիսի գործարքներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ իրական արժեքի որոշման համար: Մինևույն ժամանակ, ապագա դրամական միջոցների հոսքերի անորոշության պատճառով դրամական միջոցների հոսքերի զեղչման մոտեցման արդյունքում ստացվում են իրական արժեքի տարբեր արդյունքներ:

Անվանում	Հիմնական գործունեություն	Վերահսկողություն %		2011թ. Հաշվեկշռային արժեք	2010թ. Հաշվեկշռային արժեք
		2011թ.	2010թ.		

**12 Պաշարներ**

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հունք		
Անավարտ արտադրանք		
Պատրաստի արտադրանք		
Այլ		

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է [գումար] հազար դրամ (2010թ.` [գումար] հազար դրամ), որը ներառում է պաշարների արժեզրկումը մինչև իրացման գուտ արժեք` [գումար] հազար դրամ (2010թ.` [գումար] հազար դրամ) և նվազեցվում է [գումար] հազար դրամով (2010թ.` [գումար] հազար դրամ), որն իրենից ներկայացնում է նախկինում արժեքի իջեցման հակադարձում: Նախկին իջեցումները հակադարձվում են վաճառքի գնի աճի արդյունքում [կամ ներկայացնել այլ բացատրություններ]:

Ակնկալվում է, որ [գումար] հազար դրամ արժողությամբ պաշարները (2010թ.` [գումար] հազար դրամ) կփոխհատուցվեն ավելի քան տասներկու ամսվա ընթացքում: Պաշարները գրավադրված չեն:

### 13 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր		
Այլ առևտրային դեբիտորական պարտքեր		
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ		
Ջուտ առևտրային դեբիտորական պարտքեր		
Տրված կանխավճարներ		
Կառուցման պայմանագրեր		
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր		
Այլ [բացահայտել]		

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից (և/կամ ծառայությունների մատուցումից) առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է [թիվ] օր: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: [Խումբը/Ընկերությունը] լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան [թիվ] օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը [նույն թիվ] օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի: Ելնելով անցյալի փորձից [կամ ներկայացնել այլ բացատրություններ] [թիվ] օրից մինչև [թիվ] օր առևտրային դեբիտորական պարտքերը պահուստավորվում են՝ հիմնվելով ապրանքների վաճառքից (և/կամ ծառայությունների մատուցումից) առաջացած չվերականգնվող գումարների անհավաքագրելիության գնահատման վրա:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ [գումար] հազար դրամ արժեքով (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [գումար] հազար դրամ) առևտրային դեբիտորական պարտքերը եղել են ժամկետանց, սակայն չեն արժեզրկվել: Սա վերաբերում է [նկարագրել այդ դեբիտորական պարտքերի բնույթը]: Այս դեբիտորական պարտքերի ժամկետային վերլուծությունը բացահայտված է ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 6 ամիս		
6 ամսից մինչև 1 տարի		
1 տարուց ավելի		

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ [զումար] հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [զումար] հազար դրամ) ընդհանուր հաշվեկշռային արժեք ունեցող առանձին առևտրային դեբիտորական պարտքերն արժեզրկվել են, և դրանց գծով ստեղծվել է պահուստ: Պահուստի գումարը կազմում է [զումար] հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [զումար] հազար դրամ): Առանձին արժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում վերաբերում են [նկարագրել բնույթը]: Այս դեբիտորական պարտքերի ժամկետային վերլուծությունը բացահայտված է ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 6 ամիս	_____	_____
6 ամսից մինչև 1 տարի	_____	_____
1 տարուց ավելի	_____	_____

Այն դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները, որոնց պայմանները վերանայվել են և որոնք, հակառակ դեպքում, կլինեին ժամկետանց կամ արժեզրկված, կազմում են [զումար] հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ [զումար] հազար դրամ):

*[Լրացուցիչ բացահայտման անհրաժեշտություն կառաջանա պահուստավորման այնպիսի քաղաքականության կիրառման դեպքում, երբ լուծարման փուլում գտնվող դեբիտորների գծով ժամկետանց գումարները չեն պահուստավորվել]*

Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ.	2010թ.
Տարեսկզբի մնացորդ	_____	_____
Պահուստի ճշգրտում	_____	_____
Տարվա ընթացքում պահուստի աճ (տես՝ ծանոթ. [թիվ])	_____	_____
Տարեվերջի մնացորդ	_____	_____

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Հավաքագրելիության ռիսկի կենտրոնացումը սահմանափակ է՝ ելնելով հաճախորդների շրջանակների մեծությունից և կապակցված չլինելու հանգամանքից: Հետևաբար, ղեկավարությունը հավատացած է, որ ստեղծված կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից գատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

Տես՝ ծանոթագրություն [թիվ]՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

## 14 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ		
Բանկային հաշիվներ		

## 15 Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ

[Խմբի/Ընկերության] ղեկավարությունը որոշել է տարվա ընթացքում օտարել մի շարք հիմնական միջոցներ: Գեկավարությունն ունի օտարման համար մշակված ծրագիր և համոզված է, որ օտարումը տեղի կունենա հաշվետու ամսաթվից հետո՝ 12 ամսվա ընթացքում: [Ներկայացնել լրացուցիչ մանրամասներ]

## 16 Կապիտալ և պահուստներ

### 16.1 Բաժնետիրական (Կանոնադրական) կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2011թ.	Սովորական բաժնետոմսեր 2010թ.
Հայտարարված բաժնետոմսեր [քանակ] սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ [գումար] դրամ		
Թողարկված և տարվա ընթացքում ամբողջովին վճարված [քանակ] սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ [գումար] դրամ		

[Խումբն/Ընկերությունն] ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն է կամ տի նկատմամբ իրավունք չունի:

[Ներկայացնել ժամանակաշրջանի ընթացքում սովորական բաժնետոմսերի փոփոխությունների վերաբերյալ մանրամասներ]

### 16.2 Շահաբաժիններ

2011թ. [ամսաթիվ] սովորական բաժնետոմս ունեցող բաժնետերերին վճարվել է [գումար] հազար դրամ շահաբաժին, իսկ 2010թ. [ամսաթիվ]՝ [գումար] հազար դրամ:

Գեկավարության առաջարկով 2012թ. [ամսաթիվ] ընթացիկ տարվա արդյունքների հիման վրա բաժնետերերին վճարվելու են [գումար] հազար դրամի շահաբաժիններ: Այս շահաբաժինները պետք է հաստատվեն տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ [կամ փոփոխել՝ ըստ անհրաժեշտության] և չեն ներառվել սույն [համախմբված] ֆինանսական հաշվետվություններում՝ որպես պարտավորություն:

[Բացատրել, եթե մեկ այլ մոտեցում ավելի տեղին է]

### 16.3 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ [կամ փոփոխել՝ ըստ անհրաժեշտության]՝ համաձայն որի [մանրամասնել]:

### 16.4 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է [հողի և շենքերի] [փոխել՝ ըստ անհրաժեշտության] վերագնահատման արդյունքում: Վերագնահատված [հողի և շենքերի] օտարման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին կամ վնասին [փոխել՝ ըստ անհրաժեշտության]:

## 17 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
[Ապահովված/Չապահովված] բանկային վարկեր Կապակցված կողմերից ապահովված/չապահովված փոխառություններ				

Բանկային փոխառություններն ունեն [թիվ] տարի մարման ժամկետ և տարեկան [%] միջին տոկոսադրույք (2010թ.՝ [%] տոկոսադրույք):

Վարկերն ու փոխառություններն ապահովված են [գրավի տեսակ] (տես՝ ծանոթագրություն [թիվ]):

Ոչ ընթացիկ վարկերի և փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

Հազար դրամ

	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
[Ապահովված/Չապահովված] բանկային վարկեր Կապակցված կողմերից ապահովված/չապահովված փոխառություններ				

